Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16 SEP 2005

ՀՐԱՏ. ՈՍԿԻՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆ

839.82
Բ-50

№ 9100

ԲԵՕՐՆՍՕՆ

ԿԱԶՄԵՑ
Ե. ԹՈՓՉԵԱՆ

1005
21053

1 պատկեր

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
«С.С.Р.Հայկական Ազգային Գրադարան»
7/XI-1922
անվան Մասնաճյուղ
Ա. ՍԱՍՈՒ ԻՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ

9750

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Արազատիպ-Տպարան Ստեփանեանցի
1901

05.03.2013

5057

Дозволено Цензурою, Тифлисъ, 22 Сентября 1901 г.

21053 Т

ԲԻԷՐՆԵՑՏԻՐՆԷ ԲԵՕՐՆՍՈՆ։

I

Օտարների համար Բեօրնսոն միայն մի մեծ բանաստեղծ է, իսկ իր հայրենի Նորուեգիայի համար և՛ բանաստեղծ և՛ հասարակական գործիչ։ Նա ոչ միայն երգել է լաւն ու բարին, ոչ միայն գեղեցիկ դրամաներ ու պատմուածքներ է գրել, այլ մասնակցել է նաև հասարակական հրատապ հարցերին և միշտ աշխատել է պաշտպանել արդարութիւնն ու ճշմարտութիւնը։

Նա դեռ երիտասարդ հասակում անվախ կռիւ է սկսել գրական ասպարէզում և իր համարձակութեան ու եռանդի շնորհիւ կարողացել է միշտ էլ ուշադրութիւն գրաւել...

Նրա գործունէութիւնն ունեցել է զգալի արդիւնք, ցանած սերմերը բերել են պտուղներ։

Ինչպէս յայտնի է, մի հեղինակ կարող է մեծ տաղանդ ունենալ, բայց անհաշտ մնալ իր ազգի և շրջապատող ժողովրդի հետ։ Այստեղ պատճառն այն տարբերութիւնն է, որ գոյութիւն է ունենում հեղինակի համոզմունքների և ժողովրդական բնաւորութեան ու զարգացման աստիճանի մէջ։ Այդ հանգամանքը շատ երևելի մարդկանց

դառնութիւն է պատճառել և նոյն իսկ տարագիր դարձրել։ Բաւական է յիշել Բայրոնին, Հայնէին, Իբսէնին, Տուրգենևին և այլն։ Շատ հեղինակներ էլ թէև մնացել են իրանց հայրենիքում, բայց միշտ անջատուած, մէկուսացած են զգացել իրանց։

Սակայն բոլորովին ուրիշ է Բեօրնսոնի բաղդը։ Ճիշտ է, նա էլ ունի հալածողներ ու հակակրողներ։ Ճիշտ է, կառավարութիւնն ու ամբողջ իշխող տարրը հակառակ են նրան և ամեն կերպ աշխատում են հարուածներ հասցնել, բայց ժողովուրդը սիրում է նրան, յարգում է նրա ձգտումներն ու համոզմունքները։ «Բեօրնսոն անունը մի դրօշակ է Նորուեգացիների համար», ասում է Բրանդէս*)։ Եւ դա շատ ճիշտ է, որովհետև նրա անունը կարող է նոյն չափով դէպ իրան քաշել առանձին անհատներին, ինչպէս ազգային դրօշակը։ Նրա ամբողջ գործունէութեան նշանաբանն է եղել՝ պաշտպանել ու արծարծել իր հայրենակիցների սէրը դէպի հայրենիքն ու ազատութիւնը, դէպի արդարութիւնն ու ճշմարտութիւնը։

Նա ինքն էլ միշտ սիրել է իր հայրենի երկիրը. «Ես ուզում եմ Նորուեգիայում ապրել, գրում է նա 1880 թ. Բրանդէսին, Նորուեգիայում հարուածել և հարուածների ենթարկուել, Նորուեգիայում երգել ու մեռնել...»

*) Georg Brandes «Moderne Geister» Berlin, 1881.

II

Բեօրնսոն ծնուել է 1832 թ. Դեկտեմբերի 8-ին, Նորուեգիայի Կուիկնէ աւանում, որտեղ նրա հայրը պաստոր էր։

Այստեղ բնութիւնը աղքատ է և մռայլ։ Մերկ ժայռեր, ցիր ու ցան կանգնած ծառեր—ահա նրա ամբողջ հարստութիւնը։ Երկիրն անպտղատու է և եղանակը խիստ։ Ձմեռը ձեան հաստ շերտն է ծածկում սար ու հովիտ, իսկ ամառը—յորդ անձրևն է իր դերը խաղում։

Ահա այդպիսի մռայլութեան, այդպիսի աղքատիկ բնութեան մէջ է անցկացրել Բեօրնսոն իր մանկութեան առաջին տարիները։

Բարեբախտաբար շուտով նրա հայրը տեղափոխուեց Նեսսետ (Nässet), որ ամբողջ Նորուեգիայում հռչակուած է իր գեղեցկութեամբ ու բնական հարստութեամբ։ Այդ ժամանակ Բեօրնսոն վեց տարեկան էր։

Բնակավայրի փոփոխութիւնը բարերար ազդեցութիւն է ունենում նրա վրայ։ Նա աւելի կենսուրախ ու կայտառ է դառնում, աւելի ազատութիւն է տալիս իր բանաստեղծական ձգտումներին։

Դպրոցական շրջանում մանուկ Բեօրնսոնն իր ընկերներից մի փոքրիկ խմբակ է կազմում և նրանց ղեկավարը դառնում։

Այդ շրջանում նա մեծ եռանդով կարդում է պատմական և բանաստեղծական գրուածքներ,

ժողովրդական երգեր, աւանդութիւններ ու վէպեր։

Տասնեւեօթ տարեկան հասակում նա գալիս է Խրիստիանիա ուսանողական քննութեան պատրաստուելու և այստեղ սկսում է կարդալ դանիական գրականութիւնը, միևնոյն ժամանակ ծանօթութիւն հաստատելով յայտնի բանաստեղծ Ֆինէի, պատմաբան Սարսի և ուրիշ աչքի ընկնող մարդկանց հետ։ Նրա վրայ առանձնապէս մեծ ազդեցութիւն է թողնում դանիական թատրոնը։

1852 թ. նա վերադառնում է ծնողների մօտ իբրև ուսանող և սկսում է երգեր յօրինել, ժողովրդի կեանքով աւելի ու աւելի հետաքրքրուել։

Կարճ միջոցում նա նորից գալիս է Խրիստիանիա և գրական ասպարէզ մտնում իբրև թատրոնական գրուածքների քննադատ։ Այստեղ նա դառնում է—«Aftenblad» թերթի ամենամօտ աշխատակիցներից մէկը։

Այդ ժամանակ նա սկսնակ էր, բայց անվախ սկսնակ. նա գրում էր երիտասարդական ամբողջ աւիւնով և անխնայ խստութեամբ։ Ահա այդ խիստ պատճառով նրա թշնամիներն աւելանում էին օրէ օր։ 1860 թ. նա տեղափոխուեց Կոպենհագէն, իսկ այնտեղից—Հռոմ։ 1863 թ. Ֆրանսիայի և Գերմանիայի վրայով վերադարձաւ հայրենիք և 1866—71 թ. վարեց «Norsk Folkeblad» թերթի խմբագրի պաշտօնը։ 1873 թ. նա գնաց արտասահման, ուր մնաց մինչև 1875 թ. և ապա վերադարձաւ Նորուեգիա։

Այդ ժամանակաշրջանում նա անդադար աշխատում էր, մասնակցելով բոլոր հասարակական հարցերին—նոյն խիստ հեռուից։ 1882—88 թ. նա ապրում էր Փարիզում, բայց այդտեղից էլ իր գրչով շարունակում էր հրապարակախօսական գործունէութիւնը։

Նա իր համոզմունքներով միշտ հակուած է եղել դէպի ձախակողմեան—(դեմոկրատական)—կուսակցութիւնը։

III

Իր գրականական գործունէութեան առաջին շրջանում Բեօրնսօն գրում էր և լիրիքական ոտանաւորներ—ժողովրդական երգերի նմանողութեամբ։

Սակայն այդ զբաղմունքը նրան բաւականութիւն չէր տալիս։

Նա սկսում է գրել թատերական երկեր և առաջին անգամ լոյս է ընծայում «Ճակատամարտում»-(«Zwischen den Schlachten»)-դրաման, որի մէջ պատկերացրած է մի միջնադէպ միջնադարեան Նորուեգիայի կեանքից։

Գլխաւոր հերոսը Սվերրէ թագաւորն է, որը ունի բարի և փափուկ սիրտ, բայց չարաբաստիկ հանգամանքների շնորհիւ ստիպուած է լինում կեղծ անուան տակ թափառել և ժողովրդին մեծ զրկանքներ պատճառել։

Վերջապէս 1857 թ. լոյս է տեսնում նրա «Սիննեօվէ Սոլբակկէն»—(«Synnöve Solbakken»)—վէպը, որի մէջ բանաստեղծօրէն նկարագրուած է գիւղական կեանքը, ընտանեկան բարք ու վարքը։

Վէպի հերոսներն են Սիննեովէ Սոլբակկէն և Թորբիորն։

Հարևան ընտանիքների զաւակներ էին երկուսն էլ, ուստի դեռ մատաղ հասակից նրանց մէջ սկսուեց սերտ յարաբերութիւն։

Նրանք յաճախ պատահում էին միմեանց, խօսակցում և խաղում էին իրար հետ։ Մանկական անարատ սէրը զարգանում էր անմեղ սրտերում և աւելի ու աւելի մտերմացնում նրանց յարաբերութիւնը։

Անցան տարիներ։ Սիննեովէն և Թորբիորն արդէն չափահաս էին։ Փոխադարձ սէրը հասել էր իր գագաթնակէտին և վերջապէս ամուսնական կապը հաստատեց նրանց երջանկութիւնը։

Իսկական սէրը մի զօրեղ ոյժ է, որ ոչնչացնում է ամեն տեսակ արգելքներ—ահա սա է վէպի իդէան, որ պատկերացրած է այնքան գրաւիչ, այնքան բանաստեղծական ձևով։

Այդ վէպը միանգամից հռչակ պարգևեց Բեօրնսօնին։

Թէ բովանդակութեամբ և թէ իդէայով այս վէպին շատ մեծ նմանութիւն ունի «Արնէ» անունով պատմուածքը։

Այդտեղ էլ նկարագրուած է կրակոտ սիրոյ զարգանալը և իր կէտ նպատակին հասնելը։

Այդտեղ էլ հեղինակն իրան յատուկ ճշգրիտ ու բանաստեղծական ձևով պատկերացնում է ժողովրդի կեանքը, սովորութիւններն ու համոզմունքները։

Այդ երկու գրուածքի աջողութեան գլխաւոր պատճառն այն էր, որ նրանց իդէան համապատասխանում էր «ազգային լիբերալներ» կոչուող կուսակցութեան փայփայած գաղափարներին։

Պէտք է նկատել, որ այդ կուսակցութիւնը կասկածանքով էր վերաբերուում դէպի եւրոպական գրականութիւնն ու գիտութիւնը։

Նա հաւատացնում էր, թէ միայն հիւսիսը, միայն Նորուեգիան կարող է ծնունդ տալ այն ամենին, ինչ որ թարմ է և մաքուր, ինչ որ լաւ է և գեղեցիկ։

Նա ուզում էր ունենալ զուտ ազգային, զուտ սկանդինաւիական բանաստեղծութիւն և այդ ցանկութեան բաւարարութիւնը տալիս էր Բեօրնսօն։

Պարզ է ուրեմն, որ նրան պէտք է սիրէին ու բարձրացնէին։

Թէ վերոյիշեալ մեծ պատմուածքները և թէ միւս մանրները—(օր. «Հայրը» «Արծուի բունը», «Հաւատարմութիւն»,« Կեանքի հանելուկը» և այլն) —իրանց մէջ պարունակում են մի առանձին թարմութիւն և նորուեգիական աւանդութիւններին յատուկ ոճ։

Այդ մանրավէպերի ընորոշ գիծն այն է, որ հեղինակը նկարագրում է առօրեայ կեանքը, պատկերացնում է գիւղացու մտածմունքներն ու հաւատալիքները ճիշտ այնպէս, ինչպէս կայ, առանց անձնական ձգտումներ մտցնելու, առանց փիլիսոփայօրէն քննադատելու։

Չնայելով այդ հանգամանքին, նրա այդ գրը-

ուածքներն էլ զուրկ չեն բանաստեղծական գրաւչութիւնից։ Դրանց մէջ հեղինակը միացրել է կենսական ծանօթութիւնը լիրիքական քնքշութեան հետ և դրանով կազմել է ընթերցանութեան համար հետաքրքիր երկեր։

Ժողովրդական աւանդութիւնները, երգերն ու հեքիաթներն են եղել այդ երկերի աղբիւրը։

IV

Այդ պատմուածքներին հետևում են դրամաներն ու ոտանաւորները։ Այստեղ ժողովրդական ոգու խորքից դուրս է բղխում անհատականութիւնը և աւելի ու աւելի զարգանում։

«Ճակատամարտում»—(Zwischen den Schlachten)—«Զար Սիգուրդը»—(«Sigurd der Böse»)—և «Արնլեօտ Գելինէ»—(«Arnljot Gelline»)—դրամաներում աչքի է ընկնում միևնոյն մեծ տիպը, որը ուժեղ է և ազնիւ, որը ստեղծուած է ժողովրդի բարերարը լինելու, բայց հանգամանքների շնորհիւ ստիպուած է չարիքներ գործել։

Ամբողջ քաղաքներ հրդեհի կերակուր են դառնում բոլոր այն տեղերում, որտեղից անցնում է Սվերրէն *)։ Նա դառնացած սրտով պատմում է.—«Ես ճանաչում եմ մի իշխանի, որն ուզում էր իր ժողովրդի բարիքն ու օրհնէքը դառնալ, բայց նրա չարիքն ու նզովքը դարձաւ։ Անընկճելի ճակատագրի նման նա անցնում է մի արեան դաշտից

*) Նան. Սվերրէն «Ճակատամարտում» դրամայի հերոսն է։

դէպի միւսը։ Նրա ճանապարհը ծածկուած է ծխացող դիակներով ու աւերակներով։ Նրան հետևում է անվերջ հառաչանքն ու աղմուկը... Շատերն ասում են, թէ սատանան նրա օգնականն է, ոմանք էլ պնդում են, թէ նա ինքը սատանան է... Բայց ես գիտեմ, այո, գիտեմ հաստատապէս, որ նա անկարող է առանց իր դժբաղդութիւնը մեծացնելու մէկի վրայ ձեռք բարձրացնել նոյն իսկ այն ժամանակ, երբ ուրիշները գազանների նման իրար պատառոտում են . . . Նա միայն բարիք է կամենում...»

Այդ իշխանն ինքը Սվերրէն է։

«Զար Սիգուրդ»—ի հերոսը—Սիգուրդ ժողովրդին ատելի է դառնում նրա համար, որ իր արդար իրաւունքն է պաշտպանում և Նորուեգիայի բաղդը կամենում։

«Արնլեօտ Գելինէ»—ի հերոսը—Արնլեօտ իր ամբողջ հոգով հեզ ու բարի է, բայց հանգամանքներից ստիպուած դառնում է աւազակ ու մարդասպան։

Հասկանալի է, որ այդպիսի տիպեր ստեղծելու համար մեծ դեր է խաղացել հեղինակի «ես»ը, անհատականութիւնը։ Սակայն, ինչպէս վերևում նկատեցինք, այդ անհատականութիւնը բղխում է հէնց ժողովրդի ոգուց և զարգանում է, որպէսզի նորից միանայ ժողովրդի հետ։

Այդ կէտում Բեօրնսօնի կատարեալ հակապատկերն է ներկայացնում Նորուեգիայի միւս պար-

ծանքը—Իբսէն։ Իբսէնն իր ամբողջ էութեամբ հեռու է ժողովրդից. նա միայնակ է բառիս բուն նշանակութեամբ։ «Ես կ'մնամ միայնակ, հեռու օտարութեան մեջ», ասում էր նա դեռ 1875 թ. իր ճառում և այդ խօսքերը դարձել են նրա ամբողջ կեանքի նշանաբանը։ Նա աշխատում է թափանցել մարդկային սրտի խորքերը։

Դու, ծանր մուրճ, բաց ինձ ուղի
Դէպի անհուն խորքը սրտի։
Ասում է նա իր հերոսի բերանով։

Բեօրնսօնն ընդհակառակը չի ձգտում դէպի խորքերը։ «Նրա հանճարն ազատ թեւեր ունի», ինչպէս իրաւացի կերպով նկատում է Բրանդէս*։ Իբսէնը հասարակութեան համար մի խիստ դատաւոր է, իսկ Բեօրնսօն—մարգարէ, որ ջերմագին նախագուշակում է գալիք լաւ օրերը։ Իբսէնի տաղանդն իր մէջ մի յեղափոխող տարր է պարունակում։ Նա «Սիրոյ կոմեդիայում»—(«Komedie der Liebe»)—և «Նօրա»—ում—(«Nora»)—մերկացնում է ամուսնութեան վատ կողմերը, «Բրանդ»-ում—(«Brand»)—քաղաքական եկեղեցին, «Հասարակութեան հիմքեր»—(«Stützen der Geselschaft») դրամայում—ամբողջ քաղաքացիական հասարակութիւնը և այլն։

Նրա սուր քննադատութիւնը ջախջախում է այն ամենը, ինչ որ ուզում է։ Իսկ Բեօրնսօն ընդհակառակը հաշտեցնող ոգի է և կռիւ է մղում առանց դառնութիւնների։

*) Ծան. G. Brandes: «Menschen und Werke».

Իբսէնը միշտ սիրում է գաղափարը և տրամաբանական—հոգեբանական տեսողականութիւնը, իսկ Բեօրնսօն դրա փոխարէն ունի խոր սէր դէպի մարդ արարածը։

Մի ուրիշ տարբերութիւն էլ նշմարւում է այդ երկու խոշոր բանաստեղծների առաջին դրամաներում։ Իբսէնն իբրև զուտ դրամատուրգ իրան միշտ հեռու է պահում ընութեան նկարագրութիւնից։ Նրա երկերում տեղ-տեղ պատահող նկարագրութիւնները սիմբոլական նշանակութիւն են ստանում։

Բոլորովին այլ կերպ է վարւում Բեօրնսօն։ Նա իր դրամաներում ազատօրէն տեղ է տալիս մայր բնութիւնից ստացած տպաւորութիւններին, նրա պէս—պէս նկարագրութիւններին։

Ինչ վերաբերում է Բեօրնսօնի ոտանաւորներին, պէտք է նկատել, որ թէև նա ոտանաւորներ շատ չէ գրել, բայց գրածներն այնպիսի յատկութիւն ունին, լիրիկական այնպիսի ոյժ են պարունակում իրանց մէջ, որ միշտ էլ անմոռանալի կմնան։

Նրա յօրինած ժողովրդական երգերը հնչում են անարատ քնքշութեամբ, նրա ոտանաւորներից շատերն արդէն ազգային երգեր են դարձել։ . . .

V

Եօթանասնական թուականներից Դանիայում սկսւում է գրական մի նոր հոսանք, որն իր ազդեցութիւնը տարածում է և Նորուեգիայի վրայ . . .

Ահա այդ ժամանակ, այդ վերածնութեան շրջանումն էր, որ Բեօրնսոն գրում է իր բարեկամ Բրանդէսին՝ «Ես այժմ աչքեր ունիմ, որ տեսնում են, ականջներ ունիմ, որ լսում են»։

Եւ իսկապէս մութ կէտերը, անորոշ հարցերը հետզհետէ պարզւում—լուսաբանւում էին նրա համար։ Նա անդադար կարդում էր բազմազան գրքեր ու պարբերական հրատարակութիւններ օտար լեզուներով։ Նրան հետաքրքրում էին ամեն տեսակի ու ուղղութեան գրուածքներ՝ թէ բնագիտական, թէ պատմական, թէ փիլիսոփայական, թէ քննադատական և թէ վիպական։ Նա մեծ եռանդով կարդում էր Միլլ, Դարուին, Մաքս Միւլլեր, Թէն և այլն։

Ահա այդ բազմակողմանի ընթերցանութիւնն էր նրա մէջ նոր յեղափոխութիւն առաջ բերողը, ահա այդ անդուլ ինքնակրթութիւնն էր նրա տաղանդին զարկ տուողը։

Այդ նոր շրջանի առաջին մեծ աշխատութիւնն էր «Սնանկութիւն» («Ein Falissement»)—դրաման, որն անսպասելի աջողութեան արժանացաւ թէ Նորուեգիայում և թէ Գերմանիայում։

Բեօրնսոն Սկանդինաւիայի առաջին բանաստեղծն էր, որ ամենայն լրջութեամբ պատկերացնում էր փողի տրագի-կոմիքական էութիւնը։ Այդ հանգամանքի շնորհիւ նրա յաղթանակն աւելի զգալի ու մեծ դարձաւ։

Յիշեալ դրամայի հետ միաժամանակ լոյս տեսաւ և «Խմբագիր»—(«Der Redacteur»)—դրա-

1005
21053

ման, որը գաւեշտական գոյներով պատկերացնում է Նորուեգիայի ժամանակակից մամուլի վիճակն ու կարգերը։

Այդ երկու դրամաներին հետևում են «Թագաւորը» ոտանաւորը, «Մագնհիլդ» նովելլան, «Նոր սիստեմ» ու «Լէօնարդա» դրամաները և այլն։ Դրանցից ամենաաջողը կարելի է համարել «Լէօնարդա» դրաման, որի իդէան է բարոյական և կրօնական համբերատարութիւն։

Գլխաւոր հերոսուհին տիկին Լէօնարդա Ֆալկն է, որը ուրիշի բախտաւորութեան համար զոհ է բերում իր սէրը։

Զափազանց պաղատու և արդիւնաւէտ էր Բեօրնսոնի գրիչն այդ շրջանում։ Սակայն պահպանողականներն աշխատում էին Բեօրնսոնի տաղանդը նսեմացնել, արժէքը քցել, աջ ու ձախ տարածելով, թէ նրա բանաստեղծութիւնը որոշ ձգտումներից է առաջ եկել, թէ նա գեղարուեստական արժէք չունի և այլն և այլն։

Բայց որքան արդարացի էին այդ մեղադրանքները, ինչ էին ներկայացնում նրա բանաստեղծութեան թերութիւն կազմող ձգտումները։ Նոր ժամանակի ոգին ու գաղափարները։ Բայց մի՞թէ բանաստեղծը կարող է ապրել առանց այդպիսի տենդենցիայի, առանց այդպիսի թարմ գաղափարների։ Իհարկէ ոչ։ «Այդ գաղափարները բանաստեղծի համար նոյն դերն են կատարում, ինչ որ արեան շրջանառութիւնը մարմնի համար *)...

*) Ծան. G. Brandes: «Menschen und Werke».

Հ. Ս. Խ. Գրքերի Հանրային Գրադարան
Ա. ՄՅԱՍ Ի. ՅԱՆԻ ԱՆՎԱՆ
7/XI 1922

Բեօրնսօնի նոր ուղղութեան հակառակորդները պնդում էին, թէ նորա տաղանդը կանգնած է իր բարձրութեան վրայ միայն այն ժամանակ, երբ հեռու է առօրեայ հրատապ հարցերից, հասարակական հոսանքներից։ Սակայն որքան արդարացի է այդպիսի դատավճիռը։

Ընդհակառակն այդ վերջին գրուածքներում Բեօրնսօնի ոճն ու տեխնիքական առաւելութիւններն աւելի բարձր են քանթէ առաջ, իսկ ապագան հաստատեց, որ հէնց լիշեալ «ձգտումներն ու գաղափարներն» են ամենից շատ ուշադրութիւն գրաւողը և հեղինակի հռչակը բարձրացնողը։

VI

Բեօրնսօնը ոչ միայն իր դրամաներով է նպաստել թատրոնի նշանակութիւնն ու ազդեցութիւնը բարձրացնելուն, այլ և անմիջական գործունէութեամբ։ Նա եղել է թատրոնի դիրեկտոր 1875-59 թ. Բերգեն քաղաքում, իսկ 1865-67 թ. Խրիստինիաում։ Նրա ջանքերն այդ ասպարէզում պսակուել են կատարեալ աջողութեամբ, իսկ այդ միջոցով ձեռք բերած փորձերը օգուտ են հասցրել նաև նրա գրչին։

Նրա երիտասարդական «Հուլդա»—(«Hulda»)—դրաման զրեթէ աննկատելի անցաւ, բայց դրա փոխարէն միւս դրամաները բեմական մեծ աջողութիւն ունեցան։

Դրանցից ամենանշանաւորներն են. «Մարիա Ստիւարդը Շոտլանդիայում»—(«Maria Stuart in Schotland»), «Նորապսակները»—(«Die Neuvermählten»), «Ձեռնոց»—(«Ein Handschuh»), «Մեր ուժից վեր է» («Ueber unsere Kraft») և «Աշխատանք»—(«Laboremus»)։

«Մարիա Ստիւարտը Շոտլանդիայում» դրամայի ֆաբուլան հետևեալն է. —Թագուհի Ստիւարտն ամուսնացած է լորդ Դարնլէյի հետ, բայց չի սիրում նրան։ Վերջինս տանջւում է իր ուժեղ սիրուց և խանդից, մանաւանդ, որ Թագուհին մի առանձին մտերմութիւն է ցոյց տալիս դէպի իր մասնաւոր քարտուղար կաթոլիկ Ռիցցիոն։

Սա մի չափազանց խելացի մարդ է և իր ազդեցութեան շնորհիւ մեծ չափով նպաստում է կաթոլիկութեան բարձրանալուն Շոտլանդիայում։ Ահա այդ է պատճառը, որ նրանից դժգոհ են թէ բողոքական ժողովուրդը և թէ լորդերից շատ շատերը։

Վերջապէս լորդերը մի դաւադրութիւն են կազմում, որպէսզի ոչնչացնեն Ռիցցիոին և գահընկեց անեն Թագուհուն։ Այդ դաւադրութեանը միանում է և Դարնլէյ—միայն խանդից դրդուած...

Սակայն դաւադրութիւնը աջողւում է կիսով չափ։ Ռիցցիոին սպանում են, իսկ Թագուհին փախչում է և ապա ժողովրդի ու լորդ Բոթվելլի միջոցով կարողանում է իր իրաւունքները պաշտպանել...

Այստեղ Թագաւորը նորից անցնում է իր սիրեցեալ Մարիայի կողմը, բայց վերջը ընկնում է ամենատրագիքական վիճակի մէջ։ Ամենքը ծաղրում ու արհամարում են նրան։ Ի միջի այլոց

շատ սրտաշարժ է այն տեսարանը, երբ Դարընլէյ գալիս է Շոտլանդիայի կրօնական վերանորոգիչ Կնօքսի մօտ և օգնութիւն ու խորհուրդ է աղերսում...

Բոթվելը որոշում է ամուսնանալ թագուհու հետ և այդ նպատակի համար մահացնել է ուզում թշուառ Դարընլէյին:

Սակայն Մարիան հակառակ է այդ ամուսնութեանը և համաձայնում է միայն ամենայուսահատական րոպէում, արտասունքն աչքերին:

Հէնց այն րոպէին, երբ Բոթվելը թագուհուն ստորագրել է տալիս ամուսնութեան պայմանագիրը, դրսից լսւում է աղմուկ, դղրդոց: Բոթվելը սկսում է համոզել թագուհուն, որ փախչին, բայց վերջինս չի համաձայնում:

Ներս են թափւում հակառակ կուսակցութեան ներկայացուցիչները լորդ Մուրրայի առաջնորդութեամբ և յայտարարում են, որ թագուհին արդէն գահընկեց է եղած և նրա փոխարէն թագաւորելու է թագաժառանգ Յակովը VI: Թագուհին արտասունքն աչքերին անձնատուր է լինում իր հակառակորդներին և գայրացած բացականչում է. «Իմ ազնուականութիւնը, իմ ժողովուրդն ու սէրը—բոլորը խաբեցին ինձ... Ես այժմ գերի եմ...»

Նոյն իսկ համառօտ բովանդակութիւնից երևում է, որ այդ գրուածքը լի է դրամատիքական կեանքով և ուժեղ տպաւորութիւն թողնող տեսարաններով, ինչպէս օրինակ կաթոլիկութեան

պաշտպան Ռիցցիոի սպանութիւնը, Դարընլէյ թագաւորի մահը, թագուհու փախուստը և այլն: Միայն վերջը քիչ թոյլ է կամ աւելի ճիշտն ասած՝ նա չի վերջանում:

«Նորապսակները» փոքրիկ դրամայի ֆաբուլան չափազանց հասարակ է: Նրա մէջ նկարագրուած է այն կոլլիզիան—մաքառումը, որ երբեմն տեղի է ունենում երիտասարդ կնոջ սրտում: Ծնողական սէրն ու ամուսնական սէրն են միմեանց դէմ մաքառողը:

Լաուրան ամուսնացած է Ալէքսի հետ, բայց շատ սառն է դէպի նա, որովհետև իր ամբողջ սրտով, ամբողջ էութեամբ ծնողներին է սիրում:

Ալէքսը խանդավառւում է, իրան դժբաղդ է համարում:

Վերջապէս նա Լաուրային հեռացնում է ծնողներից, որպէսզի տէր դառնայ նրա սրտին: Այդ միջոցը դուր չի գալիս ոչ Լաուրային և ոչ էլ նրա ծնողներին: Սակայն Ալէքսի հաստատակամութիւնն յաղթող է հանդիսանում: Ամուսնական սէրն օրէցօր ուժեղանում է:

Այդ երկու դրամաներում էլ նկատւում է միևնոյն թերութիւնը, այսինքն չափազանցրած ամօթխածութիւն և հոգեբանական աւելորդ նկարագրութիւններ:

Բայց այդ թերութիւնը որոշ չափով ներելի կդառնայ, եթէ աչքի առաջ ունենանք Բեօրնսոնին շրջապատող հանգամանքները:

Այդ ժամանակ թէ Դանիայում և թէ ամ-

բողջ Սկանդինաւիա թերակղզու վրայ տիրում էր մի տեսակ յետամնացութիւն—պահպանողականութիւն։ Մարդկային զգացմունքները չափում էին կրօնի ու բարոյականութեան տեսակէտից և սէրն առանց սրսակի ոճրագործութիւն էր համարւում։

Ամբողջ մտաւոր ու հոգեկան կեանքը նմանում էր արևաղուրկ բոյսին, որ հազիւ հազ է պահպանում իր գոյութիւնը։

Նոյն իսկ զարգացած մարդկանց շրջանում շատ քիչ էին յայտնի Դարուինի, Սպենսերի, Սաիւարտ Միլլի անունները։ Նոյն իսկ դրանք չէին ըմբռնում, որ Նէրոսան իր քաղաքակրթութեամբ, գիտութեամբ ու գրականութեամբ արդէն շատ առաջ է անցել, որ նա կարօտ չէ հիւսիսի հնացած «իդէալիզմին» ու նրա արձակած պատգամներին։

Բայց չնայելով դրան Նորուեգիայի երիտասարդութեան մի մասը դեռ կարծում էր, թէ միայն ինքն է լինելու աշխարհի աղն ու համեմը, միայն ինքն է ուղղութիւն տալու ժամանակակից գրական ու գիտական հոսանքներին։

Ահա այդպիսի միջավայրում էր ապրում Բեօրնսոնը, այդպիսի պայմաններում էին ծնունդ ստանում նրա վերոյիշեալ երկերը։ Շատ հասկանալի է ուրեմն, որ վատ ազդեցութիւնը թերութիւններ պիտի առաջացնէր։

VII

«Ձեռնոց» գրաման ուշադրութեան արժանի է

ոչ այնքան իր բեմական արժանիքներով, որքան շօշափած գաղափարով։

Նրա մէջ պատկերացրած է կնոջ տիպը, այն կնոջ, որ ձգտում է պաշտպանել իր իրաւունքները։

Հերոսուհին օրիորդ Սֆաֆան է, որ նշանադրուած է Ալֆի հետ։ Նա անպայման հաւատում է իր նշանածին, կարծում է, որ նա գաղափարական մարդ է, որ նրա անցեալն էլ մաքուր ու անբիծ է։ Նա ինքը անցեալում մի փոքրիկ բման է ունեցել մէկ ուրիշի հետ, յուսախաբուել է իր սիրած մարդուց և այժմ ուրախ է, որ որոշ չափով փորձուած է, որ այլ ևս նրան խաբել չեն կարող։

Ուրախ է Սֆաֆան։ Ուրախ են և նրա ծնողները, որ կարողացել են խնամիանալ քաղաքի ամենահարուստի—Խրիստենսենի ընտանիքի հետ... Պատրաստութիւններ են տեսնում հարսանիքի համար։ Բայց յանկարծ Սֆաֆան տեղեկանում է, որ իր ապագայ ամուսինը—Ալֆը չունի այն բարոյական մաքրութիւնը, ինչ որ պահանջում է իրանից, որ նա անցեալում սիրային յարաբերութիւններ է ունեցել ուրիշների հետ։ Վիրաւորուում է Սֆաֆայի սիրտը, զարթնում են արժանապատուութեան ու ինքնասիրութեան զգացմունքները։ Նա ընդհատել է տալիս հարսանեաց պատրաստութիւնները և հրաժարուում է Ալֆի հետ ամուսնանալուց...

Երկու խնամի ընտանիքներում էլ սկսւում է իրարանցում, անհանգստութիւն։ Ինքը Խրիստինը

գալիս է Ռիէսների մօտ և ակնարկներով ասառնում է բաց անել մի գաղտնիք, որը կարող է արատաւորել յատկապէս Ռիէսի և ընդհանրապէս նրա ամբողջ ընտանիքի պատիւը... Ծնողները սկսում են համոզել Սֆաֆային: Նա քիչ մեղմանում է... Վերջապէս գալիս է Ալֆը Սֆաֆային տեսնելու և թիւրիմացութիւններն ընդմիշտ փարատելու: Սակայն նրանց խօսակցութիւնը աւելի վատ հետևանք է ունենում: Զայրացած Սֆաֆան իր ձեռնոցը շպրտում է Ալֆի երեսին և հեռանում: Դրանով էլ վերջանում է դրաման:

Այս դրամայում երևում են Բեօրնսօնի երկուորեակ յատկութիւնները: Տիպերն ու պատկերները ընորոշ են և կենդանի, իսկ իդէան անկատար թողած—փիլիսոփայական մասը թոյլ: Երևում է հեղինակն ուզեցել է պատկերացնել այն ժամանակակից երևոյթը, որ տղամարդիկ կանանցից պահանջում են անարատութիւն, մաքրութիւն ու անպայման սէր, իսկ իրանք թոյլ են տալիս իրանց ամեն բան: Բայց նրան չէ աջողուել որոշակի պատկերացնել այդ իդէան: Ամբողջ դրաման չի պարզում թէ արդեօք Սֆաֆան իր արժանապատուութիւնը պաշտպանելու համար մինչև վերջը կատարում է վճռական քայլը, թէ ոչ... Նա ինչ էր ուզում ցոյց տալ իր ձեռնոցի հարուածով: Արդեօք, նա ընդմիշտ խզում է իր յարաբերութիւնը Ալֆի հետ, թէ դրանով արտայայտում է միայն իր վերջին զայրոյթը, որպէսզի յետոյ խոնարհուի իրականութեան առաջ...

VIII

Բեօրնսօնի աշխարհահայեցողութիւնը ընորոշելու տեսակէտից շատ մեծ նշանակութիւն ունի նրա «Մեր ուժից վեր է» դրաման, որը բաղկացած է երկու մասից:

Առաջին մասում *) գլխաւոր հերոսն է պաստոր Զանդը: Նա ունի հաստատուն կամք, բարի սիրտ և անլոզդոզդ հաւատ: Առօրեայ կեանքի ընթացիկ երևոյթները սակաւ են գրաւում նրան: Նա ձգտում է դէպի բարձրն ու անհասանելին, դէպի հրաշքն ու գերբնականը:

Ժողովուրդը յարգում է նրան և նոյն իսկ հաւատում, որ նրա մէջ կայ մի ինչ որ արտասովոր ոյժ, որ այնքան զարմանալի երևոյթներ է առաջացնում, այնքան հրաշքներ է կատարում...

Շրջակայ գիւղերից, հեռու վայրերից գալիս են բազմաթիւ հաւատացողներ նրան տեսնելու, նրա հրաշագործութեանն ականատես լինելու:

Միմիայն իր աղօթքի ուժով նա շատերին է բժշկել, շատերին է այս կամ այն տառապանքից ազատել...

Այժմ էլ նա ուզում է բժշկել իր անդամալոյծ կնոջը, որ երկար տարիներ տանջւում է ծանր ցաւերից ու անքնութիւնից...

Այո, ուզում է Զանդը, բայց իր խոր հաւատից կուրացած բոլորովին հաշիւ չի տալիս, թէ արդեօք հնարաւոր է այդպիսի մի մեծ հրաշք, աբ-

*) Դա բաղկացած է երկու գործողութիւնից:

դեօք նա ունի բաւական ոյժ դրա համար։ Նա կարծում է, որ եթէ կինն էլ հաւատայ, եթէ երկու երեխաներն էլ (Էլիաս և Բահիլ) նրա հետ աղօթեն, այն ժամանակ նրա տենչանքը կ'իրականանայ և թշուառ Կլարան ընդ միշտ կազատուի դառն տանջանքից։

Բայց աւաղ, երեխաները վաղուց արդէն կորցրել են իրանց մանկական հաւատը, այն հաւատը, որ նրանց մէջ ներշնչել էր Զանգը, թէ խօսքով և թէ գործով։ Այժմ այդ հաւատի փոխարէն արմատացել է կասկածն ու երկմտութիւնը։

—Ի՞նչ է քրիստոնէութիւնը, հարցնում է Էլիասը հօրից. ո՞ւր են իսկական քրիստոնեաները, որոնք ճշտօրէն ըմբռնել են Յիսուսի վարդապետութիւնը և ամենայն ջանք ու եռանդով հետևում են նրան։ Չկան... Կայ միայն մի հաւատացող, միայն մի ճշմարիտ քրիստոնեայ,... Այդ էլ դու ես...

Սրտի դառն կսկիծով լսում է Զանգը իր զաւակների կարծիքները հաւատի և կրօնի, կեանքի և իրականութեան մասին և վերջը վճռում է միայնակ գործել հրաշքը...

Ահա նա կանգնած է եկեղեցում, ահա լսում է նրա ջերմեռանդ աղօթքը... Ո՜րքան հաւատ, որքան զգացմունք կայ նրա մէջ։ Կրօնական ելգ՝ ձայնը հասնում է Կլարայի ականջին և անուշ քուն բերում նրա աչերին։ Հիւանդը քնած է մանկական հանգիստ քնով, իսկ Զանգը աղօթում է ու երդում աւելի զգացուած, աւելի յուզուած...

Յանկարծ լսում է որոտ, դղրդոց. հսկայ ժայռի ահագին բեկորները թափւում են եկեղեցու վրայ, բայց նա մնում է կանգուն, իր յարկի տակ անվնաս պահելով աղօթող պաստորին։

Ժողովրդի բազմութիւնը հաւաքւում է եկեղեցու բակում. աղմուկ է տիրում ամենուրէք, բայց Զանգը դեռ աղօթում է, Կլարան դեռ քնած է իր անուշ քնով...

Այդ միջոցին Զանգի բնակարանում հաւաքւում են բազմաթիւ հոգևորականներ, որոնք միսիոներական համագումարից վերադառնալով, եկել են անձամբ տեսնելու կատարուած հրաշքը։

Նրանց խօսակցութիւնը տալիս է հոգևորական դասակարգի ճշգրիտ պատկերը...

Այդտեղ ի միջի այլոց պատեր Բրատտ խոստովանում է իր թերահաւատութիւնը, յայտնում է, որ հոգևորականներից շատերն իրանք էլ չեն հաւատում ինչ որ քարոզում են և վերջապէս հրաժարւում է իր կոչումից, ասելով՝

—Կրօնն այլևս չի կարող մարդկութեան միակ իդէալը լինել։ Մարդ կարող է ապրել ու մեռնել իր հայրենիքի, ընտանիքի և համոզմունքի համար...

Բայց ահա և հրաշքի վերջաբանը... Հեռուից լսւում է եկեղեցու զանգակի զօրանջիւնը, ներդաշնակօրէն հնչում է՝

Ալելուիա, Ալելուիա,
Ալելուիա, Ալելուիա...

Հոգևորականները ծունկ են չոքում և ձայ-

նակցում երգեցողութեանը։ Այդ միջոցին երևում է Զանգը, իսկ միւս կողմից բացւում է անգամալոյծի սենեակի դուռը և Կլարան սպիտակ շորերը հագին, ահագին բազմութեամբ շրջապատուած կամացուկ քայլում է դէպի առաջ...

Նա փաթաթւում է Զանգի վզովը և մրմնջում.

—Դու անգնահատելի... Դու իմ սիրելի...

Սակայն բառերը սառում են նրա շրթունքներին և անշնչացած դիակը գետին է փուլում։

—Բայց ես այդպէս չէի կարծում...

Շշնջում է Զանգը և խոնարհւում Կլարայի շնչառութեանն ականջ դնելու։

Այդ բոպէին ինքն էլ կաթուածահար է լինում, իսկ եկեղեցու զանգակը դեռ զօղանջում է այնպէս ողբաձայն...

Ահա այդպիսի ցաւալի վախճան է ունենում Զանգի ձգտումը դէպի գերբնականը, դէպի «ուժից վերը»։

Սակայն դրանով դեռ չի վերջանում այդ կորստաբեր ձգտումը։ Դրամայի երկրորդ մասում հանդէս է գալիս արդէն հասուն երիտասարդ դարձած Էլիասը, որպէսզի շարունակէ հօր սկսածը։ Բայց Էլիասը հաւատի ու կրօնական ջերմեռանդութեան մէջ չի որոնում հարցի լուծումը։ Նա համեմատաբար աւելի գործնական հոտառութիւն ունի, աւելի լաւ է ճանաչում հասարակական չարիքի պատճառը, ուստի և աւելի կոնկրետ ասպարէզ է ընտրում իր գործունէութեան համար։

Նա իր ամբողջ էութեամբ նուիրւում է ժողովրդի գործին և ամենայն ջանք ու եռանդով աշխատում է թեթևացնել թշուառների ծանր վիճակը։

Դրանք ապրում են չորացած գետի խորխորատում, ուր ո՛չ պայծառ արևի ճառագայթներն են թափանցում և ոչ էլ թարմ ու ազատ օդ է շարժւում։

Դրանք, դառն քրտինք թափելով, ամբողջ օրը աշխատում են խոնաւ ու մութ հանքերում, բայց այնու ամենայնիւ չեն կարողանում իրանց համար մի տանելի կեանք ստեղծել, կարիքի ճանկերից գէթ մասամբ ազատուել։ Եւ ինչպէս կարողանան, երբ իրանց աշխատանքի տէրը չեն, երբ նրանք քրտինք են թափում, իսկ արդիւնքը վայելում են խորխորատի վերևում, հարուստ քաղաքամասում ապրող կապիտալիստներն ու մանր բուրժուաները։

Հետզհետէ սաստկանում է ժողովրդի թշուառութիւնը, աւելի-յաճախ՝ են կրկնւում դըժբաղդ դէպքերը թէ հանքերում և թէ առօրեայ կեանքում...

Վերջապէս չքաւորները վճռում են գործադուլ անել և կապիտալիստներից պահանջել անհրաժեշտ բարենորոգումներ։ Ահա այդ բողոքող տարրի առաջնորդն է դառնում Էլիասը, ընկերակից ունենալով նախկին պաստոր Բրատին։

Էլիասն իր տեմպերամենտին յատուկ ոգևորութեամբ անձնատուր է լինում այդ գործին։ Նա մի կողմից իր ճառերով գրգռում, նոր ոյժ է ներ-

շնչում բողոքողներին, իսկ միւս կողմից նիւթական օգնութիւն է հասցնում նրանց։ Այսպէս անցնում են երկար ու ձիգ օրեր, բայց կապիտալիստները ոչ միայն զիջումներ չեն անում, այլ ընդհակառակը վճռում են աւելի խիստ միջոցներ ձեռք առնել ըմբոստներին ճնշելու և աւելի կեղեքելու համար։

Զքաւորները պատգամաւորութիւն են ուղարկում յայտնի գործարանատէր Հօգլէրի մօտ, բայց վերջինս հեգնանքով է ընդունում պատգամաւորներին և դատարկաձեռն ճանապարհ դցում...

Բողոքողները հետզհետէ ընկճւում են յուսահատութիւնից։ Այլ ևս նրանց վրայ չի ազդում Էլիասի խօսքը, մանաւանդ որ վերջինս արդէն ծախել է իր ամբողջ ունեցածը և անկարող է նպաստ տալ կարօտեալներին։

Զնայելով բոլոր այդ խոչնդոտներին, Էլիասը չի յուսահատւում և վճռում է մինչև վերջը տանել իր սկսած գործը։ Իր փայփայած գաղափարն իրագործելու, կեղեքուած ժողովրդի թշուառութիւնը թեթևացնելու համար նա զոհեց իր ժամանակը, հանգստութիւնը, ամբողջ հարստութիւնը, այժմ էլ ուզում է զոհել կեանքը...

—Եթէ մարդիկ քարացրել են սրտերը թշուառների վիշտը չզգալու համար, ասում է նա, եթէ նրանք փակում են իրանց աչքերը չարիքն ու անարդարութիւնը չտեսնելու համար, այն ժամանակ անհրաժեշտ է ծայրայեղ անձնազոհութիւն, նահատակութիւն, որպէսզի բթացած ջղերը ցնցուին և զգան...

Նա կաշառում է մի գնչուհու, որի միջոցով մի գաղտնի անցք է պատրաստում Հօգլէրի ամրոցի ոտակ, այդտեղ մեծ քանակութեամբ դինամիտ է դնում և վերջը ծպտեալ շորերով մտնում է ամրոցն իբրև ծառայ։

Որոշեալ օրը բոլոր կապիտալիստները հաւաքւում են Հօգլէրի մօտ (ամրոցում) գործադուլի մասին խորհրդակցելու և բանւորներին ճնշելու համար նոր միջոցներ մտածելու։

Դա մի ընդարձակ ժողով է, որտեղ բուռն համակրանքի են արժանանում ամենածայրայեղ բուրժուական մտքերը։ Բոլոր ճառախօսները շեշտում են, որ կապիտալիստներն են պետութեան հիմքը, ժողովրդի ամենալաւ մասը, կապիտալիստներն են քաղաքակրթութեան ղեկավարը, արդիւնագործութեան զարգացնողը և այլն և այլն։

Միայն մէկն է հասարակ ժողովրդի օգտին, խօսում, բայց նա էլ ժողովականների ծաղր ու ծանակի առարկան է դառնում, և հեռանում է, ժողովը կիսատ թողնելով։

Վերջապէս Հօգլէրը փակում է ժողովը և նշան է տալիս խրախճանքն սկսելու. վառւում են գոյնզգոյն կրակները, հնչում է երաժշտութիւնը, ամեն կողմից լսւում է բեբկրանք ու քքրքիջ...

Բայց ի՜նչ սալսափ... Յանկարծ լսւր է տա-

բաձուում, թէ բոլոր դռները փակ են և շուտով ամբոցը դինամիտի պայթումից օդը պիտի ցնդի։ Խրախճանքը խանգարուում է։ Ուրախութեան ձայները փոխարինուում են յուսահատութեան ու հառաչանքի բացականչութիւններով։ Սկսուում է բաբելոնեան խառնաշփոթութիւն։ Սարսափահար եղած ժողովականներից մէկը խելագարի նման լուսամուտից դուրս է ցատկում, միւսներն այս ու այն կողմ են ընկնում և վերջապէս բացատրութիւն են պահանջում խորհրդաւոր ծառայից։

Համարձակ առաջ է շարժուում Էլիասը և ասում.

—Ես եմ այս բոլորի հեղինակը... Ձեզանից ոչ ոք կենդանի դուրս գալու չէ այս ամրոցից...

Այդ րոպէին լսուում է ատրճանակի պայթիւն և գնդակահար եղած Էլիասը գետին է փռուում, «Բահիլ, Բահիլ...» կանչելով։

Բայց Էլիասի մահը չի վերացնում օրհասը։ Մի րոպէ ևս շարունակուում է ճգնաժամը. վերջապէս լսուում է որոտընդոստ աղմուկ. ամբողջ ամրոցը քար ու քանդ է լինում, իր փլատակների տակ թողնելով անողոք կապիտալիստներին։

Դրամայի վերջին-չորրորդ գործողութիւնը ամբողջապէս լի է միստիցիզմով։ Սկզբում բեմը ներկայացնում է երբներանդ ծաղիկներով մի տարածութիւն։ Յետոյ ծաղիկները կամացուկ անհետանում են և նրանց տեղ բացուում է մի ծառախիտ պարտէզ։

Այստեղ նստարանի վրայ նստած է սևազգեստ

Բահիլը։ Նա ողբում է իր եղբօր—Էլիասի մահը։

—Էլի՜...աս, Էլի՜աս... մերթ ընդ մերթ մըրմնջում է նա. ո՞րքան խորը վիշտ կայ այդ մի հատիկ բառի մէջ...

Արտասուքի կաթիլներն անվերջ քամուում են աչքերից։ Ոչ ոք չի կարողանում մխիթարել նրան. բայց ահա գալիս են մարմնացած յոյսն ու հաւատը մանուկ Կրէդօյի և դեռահաս կոյս Սպերայի կերպարանքով և Բահիլի սիրտը քիչ սփոփանք է գտնում։ Նա խոստովանում է, որ Էլիասի մահն իզուր չէր, որ նրա փայփայած գաղափարն իրագործուելու է...

Այդ հաւատը նրա մէջ աւելի է ամրանում, երբ Կրէդօն ու Սպերան արծարծում են մանչեստերական* ոգով ներշնչուած մտքեր, թէ ապագայում չարիքն ինքն ըստ ինքեան պիտի վերանայ, թէ շատ նորանոր գիւտեր պիտի լինին, որոնք կմեթեւացնեն ու կբարձրացնեն բանուորական դրութիւնը և այլն...

Այդպէս ուրեմն դրամայի թէ առաջին և թէ երկրորդ մասում նեբքին մղիչ ոյժն է «ձգտում դէպի ուժից վեր գործեր»...

Առաջին մասում պատուր Ջանգն է գոհ գնում այդ ձգտմանը, աշխատելով իր ջերմեռանդութեամբ հաւատ վերականգնեցնել, իր հրաշա-

*) Այդ անունով կոչում է անտեսական այն ուղղութիւնը, որ կատարեալ ազատութիւն—laisser-faire—է քարոզում ոչ միայն ներքին ու արտաքին առեւտրի, այլ և իւրաքանչիւր ձեռնարկութեան մէջ։

գործութեամբ անդամալոյծին բժշկել։

Իսկ երկրորդ մասում զոհը էնտուզիաստ Էլիան է, որը գինամիտի ուժով ուզում է ոչնչացնել այն մեծ չարիքը, որ ամբողջ դարերի ընթացքում է հոգի ու մարմին ստացել, որ մի շարք տնտեսական ու սոցիալական պատճառների արդիւնք է կազմում։

Սակայն ուշադրութեան արժանին այդ իդէան չէ, այլ այն ճշգրիտ պատկերները, որոնք ընորոշում են ժամանակակից կեանքի զանազան հոսանքները, դասակարգային առանձնայատկութիւնները և ընդհանրապէս սոցիալական հարցի լաւ ու վատ կողմերը։ Իբրև օրինակ բաւական է յիշել հոգևորականների խոսակցութիւնը առաջին մասում, բանուորների ժողովը, Էլիասի և Բրատտի ճառերը, պատգամաւորների և Հոգլէրի խոսակցութիւնը, կապիտալիստների ժողովը և այլն։

Դրանցից պարզ երևում է, որ գրուածքի հեղինակն ունի ոչ միայն դրամատուրգի շնորք, այլ և ընթացիկ կեանքը դիտելու և վերլուծելու ընդունակութիւն։

Ընդհանուր առմամբ դրամայի երկրորդ մասն աւելի ցնցող տպաւորութիւն է թողնում, քան թէ նոյն իսկ Հաուպտմանի «Ջուհլակները», թէև ներքին ոյժի կողմից տարբերւում է նրանից։

IX

«Haboremus» դրաման Բեօրնսոնի ամենավերջին* գրուածքն է և ընորոշ տպաւորութիւն է թող-

*)—Այդ դրամայի գերմաներէն հրատարակութիւնը լոյս տեսաւ 1901 թ. Մինխենում։

նում իր բովանդակութեամբ։

Նրա գլխաւոր իդէան այն է, թէ վերջ է վերջոյ պիտի յաղթանակեն բարոյականութիւնն ու նրա անխախտ օրէնքները։

Հեղինակը հանդարտ և համոզուած ձևով պատկերացրել է մարդկանց կեանքը բարոյականութեան հետ շաղկապուած։ Արդեօք, անհատը կարող է իր անձնական երջանկութեան համար զոհել ուրիշի բաղդաւորութիւնը, արդեօք, կարող է դիմել դէպի լոյսը, դէպի լաւն ու գաղափարականը, միջոց ընտրելով վատութիւնն ու չարութիւնը։

—Ո՛չ, պատասխանում է Բեօրնսոն։

Բարոյականութեան գէմ մեղանչողը միշտ էլ կ'ստանայ իր պատիժը, կ'կորցնէ իր ներքին հանգստութիւնը, եթէ նոյն իսկ արտաքին պատժից ազատ մնայ։

Ամբողջ դրաման կենտրոնացած է միայն մի քանի մարդկանց շուրջը։ Չ'կան աւելորդ դէմքեր, չկայ ոչ մի կողմնակի միջնադէպ։ Բնականն ու երևակայականը շաղկապուած են իրար հետ և երկուսն էլ զարգանում են ստիճանաբար։

Երիտասարդ կոմպոզիտոր Լանգֆրէդն ուզում է յօրինել «Ունդինա» անունով մի նոր օպերա և նրանով պատկերացնել այն մշտական թախիծը, այն անվերջ ձգտումը, որ բուն է դրել մարդկանց սրտերում։

Ունդինան ջրահարս է և ներկայացնում է մարմնացած ծով, այն վրդովուած ու մրրկածուփ ծովը, որը ձգտում է միշտ դէպի ցամաքն ու երկինքը։

Կատաղի ալիքները գալիս շփում են ցամաքի փեշերը, բայց չեն կարողանում յաղթել նրան և տեղահան անել։

Վշտացած ծովը զգում է այդ և հառաչանքներ արձակում։ Կապուտակ երկինքն իր անհամար աստղերով անդրադառնում է նրա ջրերի մէջ։ Ծովը տեսնում է այդ, ձգտում է դէպի վերև, բայց չի հասնում։

Ունդինան էլ ծովի նման միշտ ձգտում է դէպի իր փայփայած նպատակը, դէպի երջանիկ կեանք, նա աշխատում է ցամաք դուրս գալ և նրա տէրը դառնալ, բայց չի կարողանում։

Նա իր ամբողջ էութեամբ սէր է ներկայացնում, բայց սառը, դաժան ու անհոգի սէր։ Նա աշխատում է տէր դառնալ ուրիշի հոգուն, որպէսզի նրա միջոցով նոր կեանք ու երջանկութիւն ստանայ։ Նա ինքը հոգի չունի և չի հասկանում, որ մարդկանց համար գոյութիւն ունին բարձր բարոյական օրէնքներ։ Իր մշտական ձգտումով տոգորուած, նա ոտնատակ է տալիս այդ օրէնքները և ինքն էլ զոհ գնում։

Ահա այդ է «Ունդինայի» բովանդակութիւնը, այդ մտքերն են երիտասարդ Լանգֆրէդին զբաղեցնողը...

Բայց ինչ որ ծնունդ է առնում երիտասարդ երաժշտագէտի երևակայութեան մէջ, անսպասելի կերպով կատարւում է իրական կեանքում։

Լանգֆրէդը սիրահարւում է տիկին Լիդիա Վիսբիի վրայ։ Երաժշտութիւնն է նրանց սիրոյ օղակը կազմում.... Բայց Լիդիայի անցեալը ան-

բիծ չէ։

Դեռ օրիորդ ժամանակը նա տաղանդաւոր դաշնակահար էր և միշտ էլ կարողանում էր հմայել իր ունկնդիրներին։ Երկար ժամանակ նա շրջիկ կեանք էր վարում, բայց ամեն տեղ իրան օտար էր զգում, անբաղդ էր համարում։ Մարդիկ սիրահարւում էին նրա վրայ, գլուխները կորցրած քաշ էին գալիս նրա յետևից, բայց այնուամենայնիւ Լիդիան բաւականութիւն չէր ստանում։

Նա ուզում էր ուրիշների նման սեփական ընտանիք ունենալ, սովորական կեանք վարել։

Նա այլ ևս անկարող էր օտարների հաճոյքին ծառայել, նրանց բաւականութեան համար աշխատել։

Մի անգամ նրան կանչում են մի հիւանդ կնոջ մօտ, Վիսբիի ընտանիքում. այստեղ Լիդիան տեսնում է հիւանդի ամուսնու և աղջկայ վիշտն ու հոգատարութիւնը, տեսնում է թէ որքան սէր ու բաղդաւորութիւն է վայելում հիւանդ տիկինը և չար նախանձը շարժւում է նրա սրտում։ Նրան թւում է, թէ ինքն աւելի իրաւունք ունի բաղդաւոր լինելու, քանթէ հիւանդը և որոշում է խլել նրա բաղդաւորութիւնը...

Նա մի կողմից թուլական Վիսբիի սիրտն է գրաւում, իսկ միւս կողմից իր տաղանդի հմայքով հիւանդ կնոջ մահը շտապեցնում...

Հիւանդը մեռնում է և Վիսբին ամուսնանում է Լիդիայի հետ։ Սակայն հարսանիքից յետոյ Վիսբին հասկանում է կատարուած իրողութիւնը։

Երազում երևում է նրա կինը և յայտնում, որ Լիդիան է եղել իրա մահուան պատճառը։ Դրանից յետոյ Վիսբին իր ծանօթներից ու բարեկամներից իմանում է Լիդիայի արկածալի անցեալը և վերջնականապէս հիասթափւում։

Նրա սէրն անհետանում է և Լիդիայի երևակայած ըետանեկան երջակութիւնը ջախջախւում։

Սակայն դա խրատ չի լինում սիրատենչ Լիդիային, չի կանգնեցնում նրա անզուսպ ձգտումը դէպի նոր կեանք, դէպի բաղդաւորութիւն...

Սկսւում է նոր սիրահարութիւնը։ Լանգֆրէդն իրան անչափ երջանիկ է զգում։ Նա ուզում է հեռանալ մարդկանցից, առանձնանալ Լիդիայի հետ և ապա սկսել իր մեծ գործը-«Ունդինա» օպերան։ Բայց նրա այժն ու եռանդը կործես, ընդհակառակը, հետզհետէ նուազում են...

Իսկ Լիդիայի սէրը զուտ եսական է։ Նրան չի գրաւում ոչ Լանգֆրէդի երաժշտական հմտութիւնը և ոչ էլ նրա միւս յատկութիւնները։ Նրա սիրտը լի է վիշտ ու թախիծով, հոգին ձգտում է դէպի բարձրը, դէպի նոր կեանք, ուստի և նրան դուր է գալիս ֆանտաստիքական «Ունդինան» և նրա մէջ արտայայտուած անսահման թախիծը։

Սէրն հետզհետէ ուժեղանում է և Լանգֆրէդին կորստեան ճանապարհի վրայ կանգնեցնում, բայց միջամտում է նրա քեռին—դօքտոր Կանը և չարիքի առաջն առնում։ Վիսբիի մօտիկ ընկերը լինելով, նա հեշտութեամբ իմանում է Լիդիայի անցեալն ու բարոյական յատկութիւնները և ապա

վճռում է Լանգֆրէդին ազատել նրա ճանկերից։

Նրա թելադրութեամբ Վիսբիի աղջիկը—Բօրնին գալիս է Լանգֆրէդի մօտ, կիսահանաք-կիսալուրջ ձևով սկսում է խօսել նրա օպերայի մասին, առանց անուններ տալու պատմում է իր մօր մահը, Լիդիայի ոճրագործութիւնը և վերջն հասկացնում է, թէ իր երջանկութեան պատճառով հիւանդի կեանքը զոհող կինն է այն ջրահարսը, որ բարոյական օրէնքները խախտելու համար կորբստեան է մատնուած։

Լանգֆրէդը հասկանում է գործի էութիւնը։ Նրա մէջ բարոյական յեղափոխութիւն է կատարւում։ Նա սկսում է առաջուայ նման աշխատել և լրջօրէն մտածել իր օպերայի մասին։

Լիդիան գալիս է, որ նրա հետ հեռանայ և նոր կեանք սկսէ, բայց Լանգֆրէդը մերժում է առանց ուշք դարձնելու նրա աղաչանքի, նրա լաց ու հառաչանքների վրայ։

Այդ միջոցին ներս են մտնում դօկտոր Կան և օրիորդ Բօրնին։ Յուսահատ Լիդիան հեռանում է..

Կանը յայտնում է Լանգֆրէդին, որ նա այժմ կարող է աշխատել, որ արդէն անցկացաւ Լիդիայի ներշնչած անզօրութիւնը։

Կանցնին տանջանքները և կ'յաղթանակէ մարդկային կեանքի օրէնքը—աշխատանքը (Laboremus), որը սերտ կապուած է բարոյականութեան հետ։

Ինչպէս տեսանք, այդ դրամայի մէջ չ'կան մութ գաղափարներ, խրթին ու անհասկանալի

մտքեր։

Ալեղարդ հեղինակն աշխատել է ցոյց տալ, թէ բարոյական օրէնքներն առաջնակարգ նշանակութիւն ունին իւրաքանչիւր անհատի համար, թէ նրանցից է կախուած մարդկային կեանքի ներդաշնակութիւնը և նրան միանգամայն աջողուել է այդ բանը։

Դրաման զուրկ չէ և թերութիւնից. օրինակ, անբնական է կնոջ երևալը Վիսբիի երազում, անբնական է նաև նրա մահը Լիդիայի շնորհալի երաժշտութիւնից։

Մինչև օրս դեռ ոչ ոքի յայտնի չէ, թէ երաժշտութիւնը մահացնող յատկութիւն էլ ունի։

Սակայն դրանք ներելի թերութիւններ են, որ երբէք չեն խանգարում դրամայի ամբողջութեանն ու ընդհանուր տպաւորութեանը։

X

Վերևում նկատեցինք, որ Բեօրնսոնը յայտնի է և իբրև քաղաքական գործիչ։ Նա դեռ երիտասարդ հասակից մտել է այդ ասպարէզը և մինչև օրս էլ շարունակում է իր արդիւնաւէտ գործունէութիւնը։

Նրա առաջին քաղաքական յօդուածներն ուղղուած էին Շուեդական պետութեան դէմ, որն աշխատում էր սահմանափակել Նորուեգիայի իրաւունքները և նրան մի նոր տեսակի Իրլանդիա դարձնել։

Ինչպէս յայտնի է, Նորուեգիան ամբողջ դա-

րերի ընթացքում զուրկ էր ազատութիւնից և կրում էր Դանիայի ծանր լուծը։ Միայն 1814 թ. նա ազատուեց այդ լծից և Շուեդիայի հետ մի առանձին պետութիւն կազմեց։ Սակայն Շուեդական կառավարութիւնն էլ իր կողմից ձգտում էր նրա ինքնուրոյնութիւնը սահմանափակել։

Ահա այդ ձգտման, այդ սահմանափակման դէմ դուրս եկաւ Բեօրնսոն իբրև «Bergensposten» լրագրի խմբագիր (1858)։ Նրա կրակոտ յօդուածները որոշ շարժում առաջ բերին և բաց արին նորուեգացիների գիտակցութիւնը։

Այդ պայքարը նա նոյն եռանդով շարունակեց նաև իբրև «Aflenblabet» և «Norsk Folkeblad» թերթերի խմբագիր...

Նա միշտ անվախ է եղել և միշտ ինքն է նետուել գաղափարական կռուի ասպարէզը։ Սկզբունքի կամ հասարակական մի որևէ հարցի համար պայքար մղելը նրա համար անհրաժեշտ պահանջ է դարձել։ Իր բնաւորութեան այդ յատկանիշը Բեօրնսոն արտայայտել է նոյն իսկ բանաստեղծութեան մէջ։ Իբրև ապացոյց վերցնենք հետևեալ դէպքը.

Դանիական մի գրավաճառ օրացոյցի յաւելուած կազմելու համար դիմում է 12 հեղինակների և խնդրում է, որ նրանցից իւրաքանչիւրը մի ամիս ընտրէ և նրա համապատասխան մի բան գրէ։ Բեօրնսոն ընտրում է Ապրիլը և գրում հետևեալ ոտանաւորը.

Ես ընտրում եմ Ապրիլ ամիսն*,
Ուր հնցածը կ'կործանուի.
Եւ երբ նորը շաչով, բոցով
Խորն ու ամուր արմատ կառնի.
Գերագոյնը երբէք, երբէք
Անողորմը չէ, որ մարդ կուզէ։
Ես ընտրում եմ Ապրիլ ամիսը,
Նա կ'յուզէ ամենուրէք.
Նա կ'ժպտայ, կ'եռայ, շողայ,
Եւ կ'բացուի կեանքը նորեկ,—
Որովհետև ոգի ունի
Եւ վառ ամառ բերել կ'ըղձայ։

Մենք գիտմամբ առաջ բերինք այս ամբողջ ոտանաւորը, որովհետև նա ամենից լաւ է ընորոշում Բեօրնսօնի ընտաւորութիւնն ու ձգտումները։

Բեօրնսօնը յայտնի է նաև իբրև ճառախօս։ Նրա խորիմաստ ճառերը միշտ մեծ տպաւորութիւն են թողնում։ Նա բուն ժողովրդի սիրելին է։ Բաւական է հնչուի նրա անունը, որպէսզի դատարկ դահլիճները լցուին հետաքրքիր ունկնդիրներով... Ներկայումս էլ, չնայելով իր զառամեալ հասակին, նա միշտ մասնակցում է Նորուեգիայի ընթացիկ հասարակական ու քաղաքական հարցերին և մերթ ընդ մերթ բարձրացնում է իր ազդեցիկ ձայնը, որ այնքան քաղցր է հնչում Նորուեգացիների ականջին, որ այնքան գրաւիչ է իր արծարծած գաղափարներով։

---

*) Այս ոտանաւորը գերմաներենից թարգմանեց Ա. Ուսաիք Խանդակեան։

Հ.Ս.Խ.Հ. ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI 1922
ИМЕНИ А. МАСИ. ИЗ
Ա. ՄԱՍԻ ԻՄԱՆ

«Ազգային գրադարան»
NL0167285